



ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2006թ.

N 540

ք.Ստեփանակերտ

ՏՈՐՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տոհմային անասնաբուծության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետին համապատասխան՝ ԼՂՀ կառավարությունը որոշում է.

1. Սահմանել տոհմային անասնաբուծության դիտարկումների (մոնիթորինգ) կազմակերպման և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Կ Ա Ր Գ

ՏՈՐՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տոհմային անասնաբուծության դիտարկումների (մոնիթորինգ) կազմակերպումը և իրականացումը (այսուհետ՝ մոնիթորինգ)՝ «Տոհմային անասնաբուծության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան:

2. Սույն կարգի հիմնական նպատակները և խնդիրներն են՝

ա) տոհմային անասնաբուծության բնագավառում մոնիթորինգի կազմակերպումն ու իրականացումը,

բ) տոհմային անասնաբուծության բնագավառում իրականացնող սելեկցիոն տոհմային աշխատանքների արդյունավետության բարձրացումը,

գ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բուծվող բարձրարժեք տոհմային կենդանիների տվյալների հավաքագրումը,

դ) տոհմային կենդանիների գլխաքանակի՝ ըստ տեսակների և ցեղերի հաշվառումը,

ե) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բուծվող գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենոֆոնդի պահպանմանն ու տոհմամթերատու հատկությունների կատարելագործմանը նպաստելը,

զ) որակյալ տոհմանյութի արտադրության և օգտագործման ծավալների աճին նպաստելը,

է) տոհմային կենդանիների ռեսուրսների բաշխման և արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկությունների և ծրագրերի մշակումն ու իրականացումը:

II. ՏՈՐՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տոհմային անասնաբուծության մոնիթորինգն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին):

4. Մոնիթորինգը իրականացվում է կամավորության սկզբունքով, կազմակերպությունների (տնտեսությունների) հայտի հիման վրա, որի ձևը հաստատում է լիազորված մարմինը:

5. Մոնիթորինգն անցկացվում է այն կազմակերպություններում (տնտեսություններում), որոնք`

ա) լիազորված մարմնի կողմից ստացել են արտադրվող կամ օգտագործվող տոհմանյութի հավաստագիր կամ ունեն տոհմային կենդանիներ,

բ) ունեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոհմանյութի ներկրման հավաստագիր,

գ) լիազորված մարմին ներկայացրել են հայտ` արտադրվող կամ օգտագործվող տոհմանյութի հավաստագիր ստանալու համար,

6. Մոնիթորինգ իրականացնելու համար լիազորված մարմինն ստեղծում է հանձնաժողով, որի կանոնադրությունը և կազմը հաստատում է լիազորված մարմինը:

7. Մոնիթորինգի անցկացման համար հանձնաժողովն ուսումնասիրում է`

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի «Տոհմային կենդանիների բոնիտավորման, ինչպես նաև նրանց` ըստ սերնդի որակի գնահատման պայմանների կարգը հաստատելու մասին» թիվ 243 որոշմամբ հաստատված` տոհմային կենդանիների բոնիտավորման, ինչպես նաև նրանց ըստ սերնդի որակի գնահատման պայմանների հաստատման կարգի համաձայն անցկացված բոնիտավորման արդյունքները և լիազորված մարմնի կողմից հաստատված անասնաբուժական և տոհմային հաշվառման գրանցամատյաններում ու գյուղատնտեսական կենդանիների տոհմային քարտերում գրանցված տվյալները,

բ) տոհմային մատղաշի ստացման, պահպանման և աճի ու զարգացման արդյունքները, (մաքուր բուծում, տրամախաչում) կիրառման հիմնավորվածությունն ու արդյունավետությունը,

գ) գյուղատնտեսական կենդանիների վերարտադրողական ունակությունները,

դ) հոտի վերարտադրության համար օգտագործվող արուների (ցուլեր, հովատակներ, խոյեր, նոխազներ, վարազներ) տոհմային որակը և արդյունավետ օգտագործումը,

ե) այլ երկրներից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն բերված կենդանիների հարմարվողականությունն ու դրանց բուծման արդյունավետությունը,

զ) դիտարկումների և գնումների միջոցով կենդանիների թույրը, մարմնակազմության տիպը, սնվածությունը, համակազմվածքի ու արտակազմվածքի առանձնահատկությունները,

է) կենդանիների կամ թռչունների կերակրման, խնամքի, պահվածքի և օգտագործման պայմաններն ու դրանց համապատասխանությունն անասնաբուժասանիտարական սահմանված նորմաներին և կանոններին,

- ը) տոհմանյութի ստացման, պահպանման և օգտագործման պայմանները,
- թ) կենդանիների արհեստական սերմնավորման արդյունքները,
- ժ) կենդանիների կամ թռչունների բուծման տնտեսական արդյունավետությունը,
- ժա) անասնաբուժության և տոհմային կենդանիների հաշվառման գրանցումների

ճշտությունը:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս.Գրիգորյան